

« ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՀՀ կառավարությունը հավանություն է տվել «Անասնաբուժության մասին» և ևս երեք օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու օրենքների նախագծերի փաթեթին, որի ընդունումը պայմանավորված է՝ Եվրասիական տնտեսական միությանը ՀՀ անդամակցության շրջանակում, Մաքսային միության հանձնաժողովի՝ 2010 թ. հունիսի 18-ի N 317, 318 և 2011թ. հոկտեմբերի 18-ի N 834 որոշումների պահանջների ներդրման անհրաժեշտությամբ: Փաթեթի ընդունման դեպքում կներդրվեն ԵԱՏՄ օրենսդրության դրույթները, մասնավորապես՝ կսահմանվեն ԵԱՏՄ տարածք երրորդ երկրի տարածքից ներմուծվող կենդանիների և կենդանական ծագման արտադրանքի արտադրությամբ, վերամշակմամբ, փոխադրմամբ և /կամ պահպանմամբ զբաղվող անձանց և կազմակերպություններում իրականացվող համապետ ստուգման ընթացակարգերը, անասնաբուժության և բուսասանիտարիայի բնագավառներում իրականացվող վերահսկողության կարգերը: Օրենքների նախագծերի փաթեթները, սահմանված կարգով, կներկայացվեն ՀՀ Ազգային ժողով:

Իր նախկին որոշումներից մեկում գործադիրը կատարել է փոփոխություն և լրացում, որով նույնականացվել են Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների առևտրի սահմանափակումները երրորդ երկրների նկատմամբ, հստակացվել ՀՀ տարածք ներմուծվող բույսերի պաշտպանության միջոցների նկատմամբ արգելանքները՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի որոշմանը համապատասխան:

ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՆՍԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱԿՅՈՒԹՅՈՒՆ

Կառավարությունում, վարչապետ Յուրի Աբրահամյանի նախագահությամբ, տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի (ԱՎԶՀ) հոգաբարձուների խորհրդի հերթական նիստը:

Մեկ րոպե լռությամբ, հիմնադրամի նախկին գործադիր տնօրեն Վլադիմիր Մովսիսյանի հիշատակը հարգելուց հետո, խորհուրդը, ձայների բացարձակ մեծամասնությամբ, հիմնադրամի նոր գործադիր տնօրենի պաշտոնում է հաստատել ՀՀ նախագահին առընթեր «Հայքրեստինգ ինստիտուտ» ՓԲԸ-ի տնօրեն, Սևանա լճի հիմնահարցերի հանձնաժողովի նախագահի տեղակալ, Յուրի Զավադյանի թեկնածությունը:

Յուրի Աբրահամյանը, հոգաբարձուների խորհրդի անունից, շնորհավորել է Յուրի Զավադյանին, մաղթել բեղմնավոր աշխատանք և վստահություն հայտնել, որ նա իր մասնագիտական փորձով և գիտելիքներով նոր թափ կհաղորդի ԱՎԶՀ գործունեությանը: Յուրի Զավադյանը շնորհակալություն է հայտնել վստահության համար և հավաստիացրել, որ բոլոր ջանքերը կներդնի Հայաստանում անտառների վերականգնման և զարգացման գործընթացն առաջ տանելու համար:

Քննարկվել են նաև անտառների պահպանությանը, վերականգնմանը և նոր անտառների ստեղծմանը, ինչպես նաև՝ անտառամերձ համայնքներում ապօրինի ծառահատումների կանխարգելմանը վերաբերող հարցեր: Կառավարության ղեկավարը հանձնարարել է պատասխանատու գերատեսչությունների ղեկավարներին՝ խիստ հսկողության միջոցով բացառել ապօրինի անտառահատումները և ներկայացնել անտառամերձ համայնքներին վառելանյութով ապահովելու խնդրի լուծման փորձերակներ:



ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՅՈՒԹՅԱՆ ՇՆՈՒՆԿԱՐՆԵՐ

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն ընդունել է ԱՄՆ գյուղէկսպորտմենտի պարավարությանը, որի կազմում էին «Կենդանիների առողջություն» հայաստանյան ծրագրի ղեկավար Լինսեյ Մալեչան և ԱՄՆ Վիրջինիա-Մերիլենդ տարածաշրջանային անասնաբուժական համալսարանի տնօրեն Վալերի Ռեզանը: Հանդիպման նպատակն էր՝ Հայաստանում գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների կանխարգելման և դրանց դեմ արդյունավետ պայքարի միջոցների երկկողմ քննարկումը:

Հաջվի առնելով հայկական կողմի առաջարկությունը՝ խումբը պարասպակամություն էր հայտնել առավել խորը ուսումնասիրություններ իրականացնել՝ հարկապես կենդանիների բրուցելոզ հիվանդության ուղղությամբ: «Հայաստանում շատ կարևոր է այդ հիվանդության կանխարգելման արդյունավետ միջոցների կիրառումը, և մենք մեր կողմից պատրաստ ենք հնարավորինս աջակցել ամերիկացի փորձագետներին՝ իրավիճակի առավել ստույգ գնահատման գործում», - նշեց նախարար Սերգո Կարապետյանը:

Հյուրերը տեղեկացրեցին, որ Հայաստանում գրնվելու ընթացքում նախատեսված են հանդիպումներ անասնաբուժության ոլորտի պատասխանատուների հետ, այցելություններ անասնապահական տնտեսություններ, ինչպես նաև նախատեսվում է կազմակերպել երկօրյա սեմինար՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարության և Ֆերմերների միջև կապի առավել սերտացնելու համար: Տիկին Ռեզանը ևս մեկ անգամ պարասպակամություն հայտնեց բազմակողմանի աջակցություն ցուցաբերել քննարկված հարցերում և, նախարարության հետ համապետ, մշակել կարիքները բնութագրող համալիր ծրագրի նախագիծ:

ՀՆԵՐԳՈՒՄ

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը հանդիպել է ՀՀ ջրային տնտեսության պետական կոմիտեի և ոռոգման համակարգի ընկերությունների ղեկավարների հետ՝ ոլորտում առկա խնդիրները քննարկելու և դրանց լուծման ուղիները նախանշելու նպատակով: «Ոլորտում կարճ ժամանակում անհրաժեշտ է իրականացնել լուրջ բարեփոխումներ, բարձրացնել ջրագրագործող ընկերությունների գործունեության արդյունավետությունը, որպեսզի մեծանա ազգաբնակչության վստահությունն այս համակարգի նկատմամբ», - նշել է նախարար Սերգո Կարապետյանը:

Անդրադառնալով ոլորտում առկա կարևորագույն խնդիրներին՝ նախարարը նախ անհրաժեշտ է համարել խստացնել ոլորտի վերահսկելիությունը, բարձրացնել թափանցիկության աստիճանը, միջոցներ ձեռնարկել ջրի կորուստները նվազեցնելու ուղղությամբ: «Պարտա սկզբին մենք արդեն իսկ պետք է լիովին պարասպակամ լինենք ոռոգման սեգոնին, որպեսզի գյուղացին չունենա ջրագրագործման հետ կապված խնդիրներ», - հավելել է նախարարը:

Հիշեցնենք, որ ս.թ. դեկտեմբերի 4-ին, ՀՀ կառավարության որոշմամբ, ջրային տնտեսության պետական կոմիտեն տեղափոխվել է ՀՀ գյուղատնտեսության նախարարության համակարգ՝ նպատակ ունենալով բարձրացնել նախարարության ոռոգման ծրագրերի կառավարման արդյունավետությունը:

ԱՆՍԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՅ

ԳՅՈՒՂԱՏՆԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԸ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՈՒՄ

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն այցելել է Կոտայքի մարզ, նախարարի այցելության առաջին կանգառը՝ Մայակովսկի համայնքում էր, որտեղ, մարզպետ Արամ Հարությունյանի ուղեկցությամբ, ծանոթացել է «Յազիջյան» ՍՊԸ խոզաբուծական համալիրի գործունեությանը:

Տնտեսության տնօրեն Ռոբերտ Յազիջյանը տեղեկացրել է, որ իրենք ներդրել են գերմանական նորագույն սարքավորումներ և կիրառում են պահվածքի ժամանակակից տեխնոլոգիաներ, այդ թվում՝ օդափոխության, ջեռուցման, ջրի խմեցման և կերակրման ավտոմատ համակարգեր: Ներկայումս ընկերությունում խոզերի ընդհանուր քանակը կազմում է մոտ 600 գլուխ, այդ թվում՝ 70 գլուխ մայրական կազմ: Համալիրի շինարարության ավարտից հետո նախատեսվում է մայրական կազմը հասցնել 120 գլխի՝ տարեկան մի արտադրանքը հասցնելով 70-72 տոննայի, ինչը կնպաստի տեղական շուկայի մասմթերքի որակի բարձրացմանը:

1 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՅ

ԳՅՈՒՂԱՏՆԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԸ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՈՒՄ

Այնուհետև նախարարն այցելել է նույն համայնքում կառուցվող «ՋՕՐ» ՍՊԸ սպանդանոց, որի աշխատանքներն իրականացվում են՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարության նախաձեռնությամբ և Հունաստանի կառավարության կողմից ֆինանսավորվող՝ «Աջակցություն Հայաստանում սպանդանոցների զարգացմանը» ՊԳԿ-ի ծրագրի շրջանակներում: Ընկերության փոխնախագահ Արմեն Հովհաննիսյանը տեղեկացրել է, որ սպանդանոցի շինարարական աշխատանքներն ավարտված են, ընթացքի մեջ են սարքավորումների կարգաբերման աշխատանքները և, փաստն օր անց, այն կհանձնվի շահագործման:



«Մինչև փարեվերջ շահագործման կհանձնվեն ևս 5 նման սպանդանոցներ: Սարքավորումները տրամադրում է պետությունը, իսկ շենքային և ենթակառուցվածքների իրականացումը կատարում է սեփականատերը: Սա պետություն և մասնավոր հատված համագործակցության լավագույն օրինակներից մեկն է: Սպանդանոցների շահագործումը մեզ թույլ կտա ներկայացնել իրականացման ռեալ հնարավորություններ, իսկ մյուս փարվանից աստիճանաբար կարգելենք բակային մորթը», - նշել է ՀՀ գյուղատնտեսության նախարարը:

Այցի շրջանակում նախարար Սերգո Կարապետյանը եղել է նաև Ջուլջ համայնքում գործող «Չանախ» կաթնամթերքի գործարանում, որի փոխնախագահ Գուրգեն Բունիաթյանը հայտնել է, որ օրական այսօրե մթերվում է 8 հազար կիլոգրամ կաթ, և այս պահին մթերման գինը կազմում է 180 դրամ: Պատասխանելով նախարարի հարցին՝ ընկերության փոխնախագահը նշել է, որ արտադրվող կաթնամթերքի գինն այս պահին չի բարձրացել:

ԱՄԱՆՈՐԻՆ ԸՆԴՊՈՒԱԶ

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍ

Երևանի քաղաքապետարանի նախարահներում ղեկավարվող 13-ին և 14-ին անցկացվել է ավանդական դարձած ամառնորյա բարեգործական փոնավածառը, որը Երևանի քաղաքապետարանի աջակցությամբ, կազմակերպել էր «Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիան»՝ Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի անունից ողջունելով ներկաներին՝ քաղաքապետի տեղակալ Արամ Սուքիասյանը շնորհակալություն է հայտնել բոլորին՝ մասնակցության համար. «Առաջին հայացքից փոնական այս միջոցառումը բավականին խորունկ նշանակություն ունի՝ բարեգործություն, աջակցություն մարզերում բնակվող կանանց, ում օգնության ձեռք էք մեկնում նրանց ինքնուրույն նախաձեռնություններում Ձեզ հաջողություն եմ մաղթում օրինակելի այս ձեռնարկման ընթացքում»:

«Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիա» նախագահ Լիլիթ Ասատրյանը ներկայացրել է, որ աջակցությունն ասոցիացիան իրականացնում է հարուկ ծրագրերով. «Բարեգործական այս փոնավածառի

հասույթը տրամադրվում է ևս մարզերում բնակվող կանանց փոնական մասնակցության խթանման նպատակով իրականացվող ծրագրերին», - նշել է ասոցիացիայի նախագահը:

Ամառնորյա բարեգործական փոնավածառի շուրջ 80 փողովարներում իրենց բազմազան արտադրանքն ու ձեռագործ աշխատանքները ներկայացրեցին արտադրող ընկերություններ, անհատներ, միջազգային կառույցներ, դեսպանություններ, մասնավորապես՝ ՀՀ-ում Բրազիլիայի Գաշխային Հանրապետության դեսպանատունը, որի ազգային կոորդիմով փողովարը ներկայացրել է անձամբ դեսպան Էդսոն Մարինյո Դուարտե Սոնտեյրոն և Շվեյցարիայի դեսպանատունը, որի փողովարը ներկայացրել է դեսպանի փոնականը:

Տոնավածառին մասնակցում էին նաև 20 սիրիահայեր՝ քաղաքապետի անունից, համեմունքների ու ձեռագործ իրերի արտադրանքներով:

Երևանի քաղաքապետարանի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչություն

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

ԾՐԱԳՐԵՐԻ ԱՐԳՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն ընդունել է Համաշխարհային բանկի երևանյան գրասենյակի նորանշանակ ղեկավար Լորա Բեյլիին: Հանդիպման սկզբում նախարարը շնորհավորել է փոնական Բեյլիին՝ պաշտոնը ստանձնելու կապակցությամբ և մաղթել արգասաբեր աշխատանք:

Նախարար Սերգո Կարապետյանը ներկայացրել է ՀՀ գյուղատնտեսության ներկայից, ոլորտում իրականացվող երկկողմ համագործակցության ծրագրերն ու ընթացիկ խնդիրները՝ հատկապես շեշտադրելով «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակություն» (CARMAC) ծրագրի կարևորությունը, որի նպատակն է՝ արտադրարարի և անասնապահական համակարգերի արտադրողականության բարելավումն ու շարունակական պահպանումը նպատակային համայնքներում:

«Միջազգային փորձագետները բարձր են գնահատել Հայաստանում Համաշխարհային բանկի հետ համագործակցությամբ իրականացվող CARMAC 1 ծրագրի արդյունավետությունը: Համոզված եմ, որ առաջի-



կայում մեկնարկվող CARMAC 2 ծրագիրը նույնպես կնպաստի գյուղատնտեսության փարբեր ճյուղերի զարգացմանը», - նշել է նախարար Սերգո Կարապետյանը:

Անդրադառնալով ոլորտում առկա խնդիրներին՝ նախարարը հատկապես կարևորել է գյուղացիական փոնականությունների խոշորացումն ու կոոպերատիվների ստեղծումը, գյուղատնտեսական փոնականի հավաքակալանի վերազինումը, ապահովագրական համակարգի ներդրումը, գյուղատնտեսական կենդանիների համարակալումն ու

հաշվառումը, սպանդանոցների կառուցումը, կլիմայի փոնականության հետ կապված գործընթացները և հույս հայտնել, որ նշված խնդիրները հնարավոր կլինի լուծել՝ դրանք ներառելով CARMAC 2 ծրագրում:

Իր հերթին, Լորա Բեյլին պարտաստականություն է հայտնել՝ շարունակել սերտ համագործակցությունը գյուղատնտեսության բնագավառում՝ գոնունակությամբ նշելով, որ ոլորտը մշտապես գտնվում է ՀՀ կառավարության ուշադրության կենտրոնում:

ՈՒՄՈՒՅՈՒՄ

ԴԱՍԸՆԹԱՅ ԱՐԱՐԱՏԻ ԳԱՄԿՈՒՄ

Վերջերս Արարատի ԳԱՄԿ-ում, Գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոնը խորհրդարանների համար կազմակերպել էր ուսուցողական դասընթաց: Բացման խոսքով հանդես եկավ ԳԱՀԿ-ի փոնականի Ժամանակավոր պաշտոնակատար, ուսուցման և նորարարական ծրագրերի բաժնի պետ Ա. Հայրապետյանը, ով ներկայացրեց կազմակերպված ուսուցման նպատակի, կարևորության և արդյունավետության մասին:

«Կարտոֆիլի և լոլիկի ցեցերի կենսաէկոլոգիական առանձնահատկություններն ու դրանց դեմ պայքարի միջոցառումները» և «Ֆիլոքսերան, փարածման պարտությունն ու ներկայիս վիճակը Հայաստանում» թեմաներով հանդես եկավ Արմենակ Տեր-Պրիգորյանը (ՀԱԱՀ Այգապրոդաբուցության և բույսերի պաշտպանության ամբիոնի վարիչ, գյուղատնտեսական գիտությունների թեկնածու):

«Բադրիչանի սորտերի և հիբրիդների համառոտ նկարագրությունը» և «Բադրիչանի սնդարար արժեքը և մշակման փոնականները» թեման ներկայացրեց՝ Կարինե Սառիկյանը (Բանջարաբուսականության և փոնական մշակաբույսերի գիտական



կենտրոն): Իսկ «Պաշտպանված գրունտում լոլիկի և վարունգի մշակման հիմնական փոնականները» թեմայով հանդես եկավ Լևոն Աճեմյանը (կենսաբանական գիտությունների թեկնածու, «Մնդի անվտանգության ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն»):

Նշենք, որ բոլոր ուսուցանողներն էլ իրենց թեմաները ներկայացրեցին շատ մատչելի և մանրակրկիտ ձևով, իսկ խորհրդարանների պարտաստվածության առումով՝ արտահայտեցին իրենց գոնունակությունը:

Ամփոփելով հանդիպումը՝ ԳԱՄԿ-ի փոնական Գ. Գալստյանը շնորհակալություն հայտ-

նեց հյուրերին՝ կարևորելով հանդիպման անհրաժեշտությունը:

Ուսուցմանը մասնակից ԳԱՄԿ-ի աշխատակիցներին և գյուղատնտեսության գծով խորհրդարաններին ԳԱՀԿ-ի կողմից մշակված ներկայացված թեմաների վերաբերյալ բաժանվեցին փողովարական թերթիկներ:

Ուսուցման վերջում փողովար ունեցան ակտիվ քննարկումներ ներկայացված թեմաների շուրջ, ինչպես նաև մասնակիցների հուզող հարցերին ուսուցանողների կողմից փողովար սպառիչ պատասխաններ:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԳԵՐԱԿԱ ԱՐԺԷ

1971թ. հիմնադրված Վայոց ձորի տարածաշրջանային պետական քոլեջը (նախկինում՝ տեխնիկում) մարզի կրթական համակարգում առանձնահատուկ նշանակություն ունեցող ուսումնական հաստատություն է, որը մարզի աշխատաշուկային ապահովում է միջին օղակի որակյալ կադրերով: Կրթօջախի հաջողությունները պայմանավորված են տնօրենի՝ Խաչանուշ Սարգսյանի

քոլեջ, ուսանող, գործատու: Քոլեջում դասավանդող Անուշավան Մովսիսյանը, որպես «Գինեգործություն և հյուսիսի արտադրություն» մասնագիտության ուսումնական պրակտիկայի ղեկավար, նշում է. «Որքան էլ ուսանողը գինված է տեսական գիտելիքներով, որքան էլ պատկերացնում է գինու պատրաստման ողջ գործընթացը, միևնույն է, քիչ է: Այն ամենը, ինչ նրանք տեսնում և



Երկարամյա աշխատանքային գործունեությամբ:

1980թ., ստանձնելով տեխնիկումի տնօրենի պաշտոնը՝ իրականացրել է մի շարք դրամաշնորհային ծրագրեր, որոնք նպաստել են քոլեջի ճանաչմանը միջազգային ասպարեզում: Նա պարգևատրվել է ՀՀ ԿԳ նախարարության «Ոսկե Հուշամեդալով», բազմաթիվ պատվոգրերով, «Ա. Աբրահամյան» հիմնադրամի ոսկե մեդալով: Այսօր քոլեջում ուսուցանվում են միջին մասնագիտական կրթությամբ «Էկոնոմիկա, հաշվապահական հաշվառում և աուդիտ», «Հաշվապահական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում», «Հաշվողական մեքենաներ, համակարգեր, համալիրներ և ցանցեր», «Իրավագիտություն», «Ավտոմոբիլային տրանսպորտի տեխնիկական սպասարկում և նորոգում», հեռակա ուսուցումը՝ «Ֆինանսներ» մասնագիտությունները:

կատարում են գինու գործարանում, անփոխարինելի է՝ գործնական կարողությունների ձեռքբերման առումով:

Ընթացիկ տարվա ամռանը Եղեգնաձորում անցկացված «Գործնական ուսուցումը՝ ճանապարհ դեպի զբաղվածություն» թեմայով սեմինարի նպատակն էր՝ գնահատել, թե ինչպես են կարիերայի կենտրոններն աջակցում գործնական ուսուցման կազմակերպմանը, և թե որքանով է այն արդյունավետ՝ շրջանավարտների զբաղվածության ապահովման տեսանկյունից: Նույն ժամանակահատվածում, ՀՀ աշխատանքային և սոցիալական հարցերի նախարարության «Մասնագիտական կողմնորոշման մեթոդական կենտրոն»-ի նախաձեռնությամբ, անցկացվել է «Կողմնորոշում, կրթություն, ապագա, աշխատանք» խորագրով կարիերայի օր՝ նպատակ ունենալով բացահայտել և իրագործել երիտասարդներին «Գինեգործություն» մասնագիտական կրթության և զբաղվածության հնարավորությունները մասին:

Միջոցառումներն անցկացվել են «Եվրոպական կրթական և գլոբալ զարգացումների հիմնադրամի» օժանդակությամբ և Վայոց ձորի մարզպետարանի անմիջական աջակցությամբ:

Ձեռքբերումների հետ մեկտեղ, քոլեջն ունի որոշ խնդիրներ՝ կապված հանրակացարանի և մարզադահլիճի կառուցման հետ, իսկ քոլեջի տնօրենի ցանկությունն է՝ ձեռք բերել միջոցներ՝ կրթօջախում գինու փոքրածավալ արտադրություն հիմնելու համար:

Մասնվել Կիրակոսյան

ՈՒՍՈՒՅՈՒՄ

ԽՈՐՀՐԴԱՏՈՒՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Օրերս Արմավիրի ԳԱՄԿ-ում տեղի ունեցավ Արմավիրի գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնի խորհրդատուների համար ուսուցողական դասընթաց՝ բույսերի պաշտպանության և մշակության վերաբերյալ: Դասընթացը ներկայացնում էին՝ Սևնդի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության, Բանջարաբուստանային մշակաբույսերի և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոնների մասնագետներ՝ Ալֆրեդ Գրիգորյանը (կենսաբանական գիտությունների թեկնածու), Լևոն Աճեմյանը (կենսաբանական գիտությունների թեկնածու) և Լաուրա Թադևոսյանը (գյուղատնտեսական գիտությունների թեկնածու):



Դասընթացը վարում էր ԳԱՄԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար, ուսուցման և նորարական ծրագրերի բաժնի պետ Ա. Հայրապետյանը: Բացման խոսքով հանդես եկավ Արմավիրի ԳԱՄԿ-ի տնօրեն Լ. Ալեքսանյանը, ով, ողջունելով ներկաներին, նշեց, որ նման դասընթացները բավականին օգտակար են խորհրդատուների համար և հույս հայտնեց, որ նմանատիպ դասընթացները շարունակական կլինեն:

«Ֆիլոքսերայի տարածման վտանգը Հայաստանում և պայքարի ուղիները» թեման ներկայացրեց Ալֆրեդ Գրիգորյանը: Վերջին տարիներին Արմավիրի մարզում մեծ տարածում ունեին նաև կարտոֆիլի և լուլիկի ցեցերը, որոնք մեծ վնասներ հասցրեցին մարզի գյուղատնտեսությանը: Դրանց կենսաբանական առանձնահատկությունները ներկայացնելիս, Ա. Գրիգորյանը նշեց, որ ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ մարզում ավելի շատ տարածված է լուլիկի ցեցը, որը հաճախակի շփոթում են կարտոֆիլի ցեցի հետ: Վնասատուները հիմնականում սնվում են մորմնագրի մշակաբույսերով և մոլախոտերով, և դրանց դեմ պետք է համակարգված պայքար իրականացվի, և միայն այդ դեպքում այն դրական ազդեցություն կունենա: Նա նշեց, որ կիրառելով պայքարի միայն մեկ մեթոդ՝ դրական արդյունքի հնարավոր չէ հասնել, ուստի ներկայացրեց պայքարի կանխարգելիչ միջոցառումների համալիր, որոնք իրականացնելու դեպքում միայն, կարելի է զերծ մնալ վնասատուների

տարածումից: «Պաշտպանված գրունտի պայմաններում լուլիկի և վարունգի մշակության ժամանակակից տեխնոլոգիաները» ներկայացրեց Լևոն Աճեմյանը: Նշելով, որ լուլիկը և վարունգը պաշտպանված գրունտի հիմնական մշակաբույսերից են, հետևաբար բարձր բերք ստանալու հիմնական գրավակալը՝ ջերմատների ճիշտ կառուցումն է, հողի և սորտերի ճիշտ ընտրությունը, բարձրորակ սածիլների ստացումը, մշակաբույսերի հետագա ճիշտ խնամքն ու ոռոգումը կազմակերպելը: Կարևորելով ջերմոցներում հվանդություններին և վնասատուներին դիմակայելը՝ մասնագետը նշեց, որ չպետք է աջաթող անել նաև ջրային և ջերմաստիճանային ռեժիմները, որոնք չպահպանելու դեպքում, տեղի կունենան բույսերի թառամումների զարգացում, որոնք էլ կարող են ոչնչացնել ամբողջ բերքը: «Բոստանային մշակաբույսերի մշակության տեխնոլոգիան, սննդային արժեքը և բուժիչ հատկությունները» թեման ներկայացրեց Լաուրա Թադևոսյանը: Նա նշեց,

որ մեր հանրապետությունում այս տարի մշակվել է 5826 հա բոստանային մշակաբույսեր, որից՝ 1772 հա-ն՝ Արարատի և 3678 հա Արմավիրի մարզերում: Բոստանային մշակաբույսերից մեզ մոտ հիմնականում մշակվում են ձմերուկ, սեխ և դդում: Լաուրա Թադևոսյանը մանրամասն անդրադարձավ տվյալ մշակաբույսերի մշակության տեխնոլոգիաներին և ագրոտեխնիկական ճիշտ կիրառումներին՝ նշելով, որ շատ կարևոր է ցանքաշրջանառության իրականացումը: Նա ներկայացրեց նաև տվյալ մշակաբույսերի հայկական սորտերը, որոնք ավելի դիմացկուն են հիվանդությունների և վնասատուների նկատմամբ: Մասնակիցներին տրամադրվեցին ԳԱՄԿ-ի և ուսուցանողների կողմից նախապես մշակված նյութեր: Դասընթացի ընթացքում տեղի ունեցան քննարկումներ և առաջարկներ. խորհրդատուներին հետաքրքրեց նաև նոր թունաքիմիկատների կիրառումը տվյալ մշակաբույսերի տարբեր հիվանդությունների դեմ: Սահականուշ Արոյան Արմավիրի ԳԱՄԿ

ՀՈՒԿԱ

ԿԳՈՐԾԵՆ ԱՄԵՆՕՐՅԱ ՌԵԺԻՄՈՎ

Երևանի գյուղատնտեսական տոնավաճառներն Ամառոյի նախաշեմին՝ դեկտեմբերի 20-ից մինչև դեկտեմբերի 28-ը, կգործեն ամենօրյա ռեժիմով:

Տոնավաճառները կազմակերպվում են Կասյան փողոցի վերին հատվածում և Մաշտոցի պուրակին հարող տարածքում (Մալիբու սրճարանի հարևանությամբ): Տոնավաճառներին մասնակցում են հանրապետության տարբեր մարզերի գյուղացիական տնտեսություններ, որոնք սպառողներին են ներկայացնում բացառապես սեփական արտադրանքը:

Տոնավաճառի մասնակիցներին ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը, անվճար հիմունքներով, տրամադրում է հարմարավետ վրաններ, վաճառասեղաններ, կշեռքեր ու սալակներ: Երևանի քաղաքապետարանն աջակցում է տարածքի տրամադրման հարցում և յուրաքանչյուր տոնավաճառի օրվա ավարտին,

իրականացնում տարածքի մաքրման աշխատանքներ: Ս.թ. դեկտեմբերի 9-ի



դրությամբ, միջին հաշվով, մեկ տոնավաճառի ընթացքում իրացվել է 40-45 տոննա գյուղմթերք, իսկ ընդհանուր առմամբ՝ 3698 տոննա:

ԿՈՌՊԵՐԱՅԻՆ

«ՀԱՄԱՏԵՂ ԱՇԽԱՏԱՆՔՆ Ե ԱՐԴՅՈՒՆՔ ՏԱԼԻՍ»



Գեղարքունիքի մարզի Գետիկ համայնքում գործող Շաքար Դանիելյանի գյուղացիական տնտեսությունը մարզում ընտանեկան ֆերմերության լավագույն օրինակ է: Բնության գողտրիկ անկյունում տեղակայված բազմաճյուղ այս տնտեսությունում խնամում են 30 գլուխ մանր, 140 գլուխ խոշոր եղջերավոր կենդանիներ, որից 50-ը՝ կովեր են: Տնտեսության աշխատանքներում հիմնականում ընդգրկված են ընտանիքի անդամները, սակայն լրացուցիչ աշխատատեղերի ապահովման համար աշխատանքի են ընդունել նաև համագյուղացիներին:

Տարիների ընթացքում, համատեղ աշխատանքի արդյունքում, տնտեսության բազայի հիման վրա ինքնաբերական ձևավորվեց «ԱԱՍ» կոոպերատիվ տնտեսությունը: Անասնապահությանը զուգահեռ, սկսեցին զբաղվել նաև դաշտավարությամբ, որպեսզի հնարավոր լինի լուծել սեփական կերարտադրության հարցը: Նախատեսել են ստեղծել կաթի և մսի վերամշակման փոքր ձեռնարկություն, սակայն, առանց պետական աջակցության, չեն կարողանում իրականացնել այդ ծրագիրը: Առայժմ տնտեսությունում արտադրված կաթը հանձնում են «Աշտարակ կաթ» ընկերությանը, որը, Շաքար Դանիելյանի տեղեկացմամբ, հատկապես ամռան ամիսներին, ուշացում է վճարումները: «Մթերված կաթի դիմաց վճարումների ձգձգումները խոչընդոտում են տնտեսության հետագա աշխատանքների բնականոն ընթացքին:

Չենք կարողանում ժամանակին գնել անասնակեր, դիզվառիլիք, կատարել վճարումներ՝ տնտեսությանը մատուցված ծառայությունների դիմաց: Ֆինանսական միջոցների սղության պատճառով ստիպված ենք ուշացնել աշխատավարձերի վճարումները»,- ասում է պրն. Դանիելյանը: Նրա տեղեկացմամբ՝ դժվարությամբ է կատարվում նաև արտադրված բարձրորակ մսի իրացումը: Ինչ վերաբերում է կոոպերատիվին, որում ընդգրկված են 17 անդամներ, նախատեսել են ձեռք բերել ժամանակակից գյուղատնտեսական տեխնիկա (առայժմ աշխատանքների 70%-ը կատարվում է ձեռքով), ընդլայնել համատեղ իրականացվող ծրագրերը: «Անհատը չի կարող զբաղվել գյուղատնտեսության զարգացումով, համատեղ աշխատանքն է արդյունք տալիս: Կոոպերատիվի անդամներով միասին ենք մշակում մեր հողատարածքները, ինչի արդյունքում կրճատվում են կատարվող ծախսերը»,- նշում է ֆերմերը: Ի դեպ տարածաշրջանում հիմնախնդիր է նաև բողի և կաշվե հումքի իրացումը: «Պետք է անել հնարավորը, որպեսզի երիտասարդների համար գյուղական կյանքը հետաքրքիր դառնա և նրանք չհեռանան գյուղից: Մեծ հույսեր ենք կապում կոոպերատիվի զարգացման հետ, քանի որ համայնքված ավելի ուժեղ ենք»,- եզրահանգում է Շ. Դանիելյանը: Ֆերմերը ոչ միայն կարևորում է տեղական արտադրության հաշվին ներքին շուկայի պահանջարկի բավարարումը, այլև՝ արտահանման խթանումը: «Գյուղացին պատրաստ է աշխատել, արարել, բարիք ստեղծել, միայն թե ավելի մեծ պետական աջակցություն ստանա, և գյուղը զարթոնք կապրի»,- հավելում է Շ. Դանիելյանը:

Նելլի Սահակյան

ԱՄՓՈՓՈՒՄ



Ամփոփելով աշխատանքային տարին՝ Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի (WWF-Հայաստան) տնօրեն Կարեն Մանվելյանը նշեց, որ դրական է գնահատում աշխատանքների ընթացքը: Ժամանակի ընթացքում, աշխատանքին զուգահեռ, շարունակվում են նաև տրամաբանական խնդիրներն ու մարտահրավերները, որոնք պահանջում են դրական լուծումներ:

Տնօրենի կարծիքով՝ հաջորդ տարում շարունակվելու է ընձառյուծի պահպանության ծրագիրը, որի շրջանակներում, բնության հատուկ պահպանվող տարածքներում տեղադրել են մի շարք թաքնված տեսախցիկներ՝ կենդանատեսակի տեղաշարժի և կենսակերպի մոնիտորինգի նպատակով: Հիմնական աշխատանքներն իրականացվել են «Խոսրովի անտառ» և «Շիկահող» արգելոցներում, «Արևիկի» ազգային պարկում, «Չանգեզուր» և «Խուստուկ» արգելավայրերում: Հաջողությամբ

յուններ, իհարկե, գրանցվել են. հայտնաբերվել են 2 եգ և 1 արու ընձառյուծներ, որոնք մեկ տարի է, ինչ բնակվում են նշված պահպանվող տարածքներում: Նախորդ տարիների համեմատ, հայկական մուֆլոնը, բեզոարյան այծը մեր տարածաշրջանում ավելացել են մոտ 30 տոկոսով:

WWF-Հայաստանն իրականացնում է նաև «Հարավային Կովկասի երկրներում, անտառների տրանսֆորմացիայի միջոցով, անտառային էկոհամակարգերի կայունության բարձրացում» կլիմայի փոփոխության նկատմամբ» ծրագիրը: Ծրագրի շրջանակներում կատարվել է անտառների տրանսֆորմացիա՝ միատարր սոճուտները վերափոխվել են լայնատերև և ասեղնատերև խառը ծառուտների: Բացի կլիմայի փոփոխության նկատմամբ դիմադրողականության բարձրացումից, տրանսֆորմացիան շատ կարևոր է նաև կենսաբազմազանության համար: Անտառային ծրագիրն իրականացվել է «Հայաստան»

ԾՐԱԳՐԵՐԸ ՀԱՅՈՂ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՆԵՆԱՆ

ՊՈԱԿԻ-ի Գուգարքի և Նոյեմբերյանի անտառտնտեսություններում: Ըստ Կ. Մանվելյանի, ծրագիրը կշարունակվի նաև հաջորդ տարում:

Հաջողությամբ իրականացվել է նաև «Արփի լիճ» ազգային պարկի ստեղծման և հարակից համայնքների զարգացման ծրագիրը: Ընթացիկ տարում 6 համայնքներում վերակառուցվել են խմելաջրի մատակարարման համակարգերը, ևս 5 համայնքում ծրագիրը կիրականացվի 2015թ.-ին: Կ. Մանվելյանը լիահույս է, որ 2015թ. ավարտին կհասցեն նաև Մեծ Սեպասար համայնքի զբոսաշրջության կենտրոնի ստեղծման աշխատանքները: Զանի որ ազգային պարկի հարակից համայնքները գտնվում են Ամասիայի տարածաշրջանում, հետևաբար բնակչության զբաղվածության հիմնական միջոցներից մեկը՝ անասնապահությունն է: Ըստ այդմ, նախատեսում են նաև տարածաշրջանում գյուղատնտեսական և արհեստական սերմավորման կենտրոններ ստեղծել: Ծրագիրն իրականացվելու է CARD-ի հետ համատեղ և սպասարկվելու է շուրջ 14 համայնքի:

2014թ. հաջողությամբ մեկնարկել է Հայաստանում Կովկասյան ազնվացեղ եղջերուի վերաբնակեցման ծրագիրը, որը ֆինանսավորվում է WWF-Գերմանիայի, Orange Կրմենիայի և HSBC բանկի միջոցներով, ինչպես նաև՝ ՀՀ բնապահության նախարարության և «Դիլիջան»

ԿՐԹ-ԱԿՆՆ

ՀԱՆՈՒՊՈՒՄ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

Սույն թվականի նոյեմբերի 26-29-ը, Եվրոպական հանձնաժողովի Տեմպուս SuToMa «Կայուն տուրիզմի կառավարման ոլորտում միջազգային բակալավական և մագիստրոսական ծրագրերի նոր մոդուլների մշակում» ծրագրի շրջանակներում, Հայաստանում էին ծրագրի համակարգման խմբի ներկայացուցիչներ՝ Գիլա Ալթմանը՝ կիրառական գիտությունների Յադե համալսարանից և Կոնոտ Շերհագը՝ Վորմսի կիրառական գիտությունների համալսարանից: Այցի շրջանակներում, վերջերս Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ռեկտոր Արշալույս Թարվերդյանը հյուրընկալեց ծրագրի ներկայացուցիչներին: Հանդիպման ժամանակ քննարկվեցին ծրագրի իրականացման հետ կապված հարցերը, խնդիրները, արդյունքները և հետագա քայլերը: Այնուհետև ՀԱԱՀ-ի ներկայացուցիչները՝ Արթուր Գևորգյանի և շուկայաբանության ֆակուլտետի ղեկավար Զ. Զավադյանը, Դրամաշնորհային ծրագրերի համակարգման

բաժնի վարիչ Վ. Գրիգորյանը, Կառավարման ամբիոնի ղեցնետ Ա. Հարությունյանը և Արտաքին կապերի ղեկարարամետի մասնագետ Զ. Մարգարյանը մասնակցեցին Երևանի պետական համալսարանում կազմակերպված դասընթացին, որը



նվիրված էր ծրագրի շրջանակներում ուսանողների համար նախատեսված պրակտիկայի կազմակերպման և ուսուցման մեթոդներին:

Հանդիպման մասնակիցները հետագայում վերապատրաստման կուրսեր կկազմակերպեն և ձեռք բերված փորձն ու գիտելիքները կփոխանցեն իրենց ԲՈՒՀ-երի համապատասխան մասնագետներին և գործընկերներին:

www.anau.am



րում է պահպանվող տարածքը: Նպատակը՝ Փոքր Կովկասի արևելյան հատվածում «Գնիշիկ» համայնքային պահ

մեծ է, միայն մի քիչ համբերություն և լավատեսություն է պետք...
Լիանա Շախնազարյան

ՄԱՍՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆՂԱՆԻՆԵՐԻ ԱՐՅԱՆ ՄԱԿԱԲՈՒԾԱՅԻՆ ՀԻՎԱՆՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վերջին մի քանի տարիների ընթացքում հանրապետությունում մեծ տարածում են ստացել գյուղատնտեսական կենդանիների արյան մակաբույծային հիվանդությունները, որոնք պարճառ են հանդիսացել կենդանիների մթերատվության, մարդաշնեռի աճի և զարգացման անկման, ինչպես նաև՝ որոշ տնտեսություններում հղի կենդանիների վիժումների և անկումների:

Արյան մակաբույծային հիվանդություններից բաբեզիոզները (պիրոպլազմոզներ) և թեյլերիոզները միշտ էլ տարածված են եղել մեր հանրապետությունում: Այնուամենայնիվ, դրանց դեմ զանգվածային կանխարգելիչ միջոցառումների իրականացման դեպքում, դրանք՝ համարյա վերանալով, կիրեն սպորադիկ բնույթ: Պիրոպլազմոզները (պիրոպլազմոզ և թեյլերիոզ) կենդանիներին բնորոշ հիվանդություններ են, որոնց հարուցիչները մակաբուծվում են էրիթրոցիտներում և մոնոնուկլեար համակարգի բջիջներում: Այս հիվանդությունները պարականում են բնական օջախային և տրանսմիսիվ հիվանդությունների թվին: Արտավայրային փոխանցողները՝ Պիրոպլազմոզները հիվանդանում են՝ տավարը, ոչխարները, ձիերը, խոզերը և շները: Յուրաքանչյուր կենդանատեսակ ունի իրեն յուրահատուկ հարուցիչը:

Ինվազիոն գործընթացի բարդությունը կախված է հարուցիչի ախտածնությունից, փրոզ օրգանիզմի բնական դիմադրողականությունից, նրա վրա մակաբուծվող փրոզի քանակներից և այլ գործոններից: Արտաքին միջավայրում չորանալիս բաբեզիոզները արագ ոչնչանում են: Դիակներում դրանք քայքայվում են մեկ օրից: Բաբեզիոզներով վարակված արյունը դանդաղ սառեցնելիս, -196°C ջերմաստիճանի պայմաններում դրանք իրենց կենսունակությունը պահպանում են մինչև 2 տարի:

Պիրոպլազմոզները սուր ընթացք ունեցող տրանսմիսիվ հիվանդություններ են, որոնց բնորոշ են՝ կայուն տենդը, սակավարյունությունը, տեսանելի լորձաթաղանթների դեղնությունը, հեմոգլոբինամիզությունը նաև օրգանիզմի այլ կենսական նշանակություն ունեցող ֆունկցիաների խանգարումները: Տավարի մոտ հիվանդության գաղտնի շրջանի տևողությունը կազմում է 8-14 օր:

Հիվանդությունը սկսվում է մարմնի ընդհանուր ջերմաստիճանի կտրուկ բարձրացումով և այդ մակարդակի վրա է մնում հիվանդության ամբողջ ընթացքում: Կովերի 40-80%-ի մոտ ընկնում է կաթնատվությունը, կաթը ստանում է դեղին, երբեմն էլ՝ կարմիր գունավորում և դառնում համ: Այնուհետև, ի հայտ են գալիս սակավարյունության, իսկ հետագայում նաև դեղնախտի նշաններ: Կենդանիների մոտ ընկնում են ախտոճակն ու շնչառությունը, իսկ զարկերակն արագանում է: Բնորոշ նշաններից են՝ ընդմիջվող փորլուծը և փորկապը, նաև նախաստամոքսների կայուն ապոնիան: Հիվանդ կենդանիների մոտ նկատվում է հաճախամիզություն և հեմոգլոբինամիզություն: Արյունը լինում է ջրիկ, էրիթրոցիտների քանակները նվազելով՝ հասնում են մինչև 2,5 մլն, հեմոգլոբինի քանակությունը նվազում է 25-32 %, իսկ լիմֆոցիտների քանակներն ավելանում են 71%:

Վերը նշված կլինիկական նշանները, հիվանդ կենդանիների մոտ առավել արտահայտված են լինում հիվանդության երկրորդ օրը, իսկ իրենց առավելագույն արտահայտվածությանն են հասնում 3-4 օրերի ընթացքում:

Հիվանդ կենդանիներին ժամանակին հայտնաբերելու և բուժելու դեպքում, կենդանիների առողջացումը կարարվում է ավելի արագ: Հնարավոր է, որ հիվանդության 3-րդ կամ 4-րդ օրը կենդանիները պիրոպլազմոզից զանգվածային անկումներ ունենան:



Թեյլերիոզները սուր և ենթասուր ընթացք ունեցող տրանսմիսիվ հիվանդություններ են, որոնք արտահայտվում են մակերեսային ավշային հանգույցների ծավալի մեծացման, տենդի, սիրտ-անոթային և մարսողական համակարգերի օրգանների գործունեության խանգարման, հյուծվածության և բարձր անկումների նշաններով:

Հիվանդության գաղտնի շրջանի տևողությունը կազմում է 6-12 օր: Ըստ ընթացքի, թեյլերիոզը կարող է լինել սուր և ենթասուր: Հիվանդության առաջին ախտանիշներից են՝ միակողմանի, փրոզի կծեղու հարվածների մոտիկ, մակերեսային ավշային հանգույցների ծավալի մեծացումը 2-4 անգամով: Ավշային հանգույցները շոշափելիս, հայտնաբերում ենք դրանց ծավալի մեծացում, անշարժություն, փեղային ջերմաստիճանի բարձրացում և ցավազգացություն:

Առաջին նշանների ի հայտ գալուց 1-3 օր անց, կենդանիների մոտ բարձրանում է մարմնի ընդհանուր

6

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ

ՄԵՂՎԱԲՈՒԾՈՒԹՅԱՄԲ ԶԲԱՂՎԵԼԸ ԴԺՎԱՐ ՉԷ, ԲԱՅՑ ԱՇԽԱՏԱՏԱՐ Է

Մեղվաբույծ Կառլեն Ճաղարյանը 30 տարի է, ինչ զբաղվում է մեղվաբուծությամբ և այդ ընթացքում մեղվաընտանիքների կորուստներ հիմնականում չի ունեցել: Երեք մեղվաընտանիքը բազմացրել, հասցրել է 180-ի: Դրա կարևոր նախապայմաններից մեկը, ըստ մեղվաբույծի, այն է, որ «տարվա մեջ մեղուն 3 գարուն է տեսնում». Ճաղարյանը մեղվաընտանիքները մի վայրից մեկ այլ վայր է տեղափոխում, որպեսզի մեղուն տարբեր վայրերից կարողանա նեկտար հավաքել:

Ըստ նրա, հաջորդ կարևոր պայմանն այն է, որ մեղուները սնվեն ոչ թե



շաքարաջրով, այլ մեղրով: Մեղուները շաքարաջրով ապրում են 6 ամիս, իսկ մեղրով՝ 8 և այդ 2 ամսվա ապրելն է ընտանիքին ամենամեծ բերքը հասցնում: «Ամեն մեղվափեթակում մոտ 20 կիլոգրամից ավելի մեղր կա ձմռան պաշարի համար: Եթե մեղուները սնվեն շաքարաջրով, մինչև գարնան վերջ կհանգեն», - նշում է մեղվաբույծը:

Նրա խոսքով՝ մեղվաբուծությամբ զբաղվելը դժվար չէ, բայց աշխատատար է: Եթե սանիտարական վիճակը պահպանվի, տեղափոխություններ կատարվեն, տարվա մեջ մի մեղվափեթակից կարելի է մոտ 10 կգ մեղր ստանալ: Հանելով մեկ մեղվափեթակի վրա ծախսած 10-ից 12 հազար դրամ գումարը՝ մեղվապահը մի մեղվափեթակից տարվա մեջ կարող է 20 հազար եկամուտ ունենալ:

Իր գործը հեշտացնելու համար Կ. Ճաղարյանը մեղր քամելու սարք է ստեղծել՝ անվանելով մեղրաքամիչ: Ասում է, որ Գորիսում իր օգնությամբ շատերն ունեն այդ սարքից: Նա նաև մեղուների մայրաբուծությամբ է զբաղվում, սակայն 180-ից ավել մեղվաընտանիք չի պահում, ու տարվա մեջ մոտ 30-ը բաժանում է սկսնակ մեղվապահներին:

Մեղվաբույծը նաև մեղվաբուծական արտադրանքների վերամշակ-

ման և փաթեթավորման ծրագիր է մշակել, որի նպատակն է՝ արտադրված մոմը հավաքել, վերամշակել և մեղվապահներին մոմաթերթ տրամադրել, որը հիմա բերում է Երևանից:

Գորիսի տարածաշրջանում մեղվաբուծությամբ զբաղվող 300-ից ավելի ֆերմեր կա, ընդհանուր թվով ունեն 18 հազար մեղվաընտանիք: Երկարամյա մեղվաբույծի խոսքով՝ ծավալները կավելանան, եթե մեղրի իրացման խնդիրը լուծվի:

Ըստ նրա՝ մեղրը հիմնականում իրացվում է ծանոթ-բարեկամի միջոցով: «Հիմնական շուկա չկա, որտեղ մարդիկ կկարողանան իրենց մեղրն իրացնել: Շուկան, որ լինի, մեղվապահներն էլ կշատանան, մեղուներն էլ», - նշում է Կառլեն Ճաղարյանը: Իսկ ինչպես տարբերակել, մեղրն անարար է, թե՛ ոչ, Կ.Ճաղարյանը նշում է, որ «մաքուր մեղրն իր համով, հոտով, գույնով տարբերվում է և հիմնականում բյուրեղանում է»: Մեղվաբույծն իր մեղրը համարում է շաքարախտի հիվանդության թշնա-



մի և հպարտությամբ նշում, որ իրենից մեկ անգամ մեղր գնողը հաջորդ տարի կրկնակին է գնում: Չնայած, որ այս տարի մեղվապահներից շատերն են բողոքում, թե մեղր չեն ունեցել, Կառլեն Ճաղարյանի «մեղուներն իրենց արդարացրել են»:

«Մյուս տարիների համեմատ՝ մի 20%-ով պակաս, բայց ունեցել են», - ասում է նա: Վերջերս ֆերմերների ազգային միավորման կողմից Կառլեն Ճաղարյանը միավորման գործունեությանն ակտիվորեն նպաստելու և գյուղատնտեսության զարգացման բնագավառում ձեռք բերած նվաճումների համար պարգևատրվել է պատվոգրով և ոսկե մեդալով:

Ասահիկ Բաղդասարյան
Սյունիքի ԳԱՄԿ

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ

ՇԱՐՈՒՅԹԻ ԳԵՐԱԿՇՈՂ ՄԱՍԸ ՎԵՐԱՎԱՃԱՌՈՂՆԵՐԻՆՆ Է

«Գեղարքունիքի մարզի Աղավնավանք և Խաչարձան համայնքներում անասնաճարակային վիճակը բարվոք է, չկան գյուղատնտեսական կենդանիների հիվանդություններ»,- ասում է այդ գյուղերը սպասարկող անասնաբույժ Գրիգոր Գրիգորյանը: Երկու գյուղերում առկա է ավելի քան 600 գլուխ խոշոր եղջերավոր անասուն: «Գյուղատնտեսական կենդանիներն առողջ են, որևէ խնդիր չունենք: Սակայն հիմնախնդիրն՝ արտադրված բարձրորակ մսի իրացումն է: Վերավաճառող-միջնորդներին բաժին է ընկնում շահույթի գերակշռող մասը»,- իր մտահոգությունն է հայտնում անասնաբույժը, ով նույնպես ֆերմեր է: Գրիգոր Գրիգորյանը խնամում է 11 գլուխ խոշոր և 25 գլուխ մանր եղջերավոր կենդանի, զբաղվում է ձիաբուծությամբ: «Եթե կարողանանք միսն իրացնել մի փոքր բարձր գնով, ապա վարահորեն կարող ենք ասել, որ ոչ միայն ես, այլև երկու գյուղերի գյուղացիական տնտեսությունները նույնպես շեշտակիորեն կավել-



լացնեն անասնապահաբանակը: Պետությունը պետք է միջամտի մսի իրացման գործընթացին»,- նշում է պր. Գրիգորյանը: Միայն Աղավնավանքում, որտեղ գրուցեցինք անասնաբույժի և ֆերմերների հետ, առկա է 240 գլուխ խոշոր (որից 120-ը՝ կով), 210 գլուխ մանր եղջերավոր անասուն, 260 խոզ, 830 թռչուն, 180 մեղվաղնվանիք: Գյուղացիները զբաղվում են նաև ձիաբուծությամբ և ճագարաբուծությամբ: Ինչ վերաբերում է անասնաբուժական սպասարկման աշխատանքների պարզաճ կատարմանը, ապա՝ մասնագետի կարծիքով, միակ հիմնախնդիրը ավտոմեքենայի բացակայությունն է, ինչը դժվարացնում է երկու գյուղերին սպասարկող անասնաբույժի աշխատանքը: Տավոք, մեր գրույցն ընդհարվեց՝ Խաչարձան գյուղից ստացված հեռախոսազանգի պատճառով. գայլը վնասել էր գյուղից մի փոքր հեռացած կովին և անասնաբույժի օգնության կարիքը կար. շտապ պետք էր հասնել... ՆԵԼԻ Սահակյան

ԾՐԱԳԻՐ

ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Շիրակի մարզի Ախուրյանի, Արթիկի, Ամասիայի, Անիի և Աշոցքի տարածաշրջանների կարկառուությունից փոսած, ինչպես նաև՝ բարձր լեռնային, խոցելի և աղքատ համայնքներում իրականացվում է ՀՀ գյուղատնտեսության նախարարության և աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից համատեղ մշակված՝ Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով, գյուղացիական տնտեսություններին աջակցության տրամադրման պետական ծրագիրը, որի հիմնական նպատակն է՝ սեզոնային զբաղվածության ապահովման միջոցով, աջակցել հանրապետության տարբեր բնակավայրերի գյուղացիական տնտեսություններին՝ բնական պարտադրանքով կրծման վնասների վերականգնման գործում, ինչպես նաև մեղմել սոցիալական լարվածությունը, նրանց կայուն զբաղվածության ապահովման համար ստեղծելով անհրաժեշտ պայմաններ: Ծրագրում, առաջնահերթության կարգով, ընդգրկված են ընտանեկան անապահովության գնահատման համակարգով հաշվառված՝ նպաստառու, երկու և ավելի անչափահաս երեխաներ ունեցող, ինչպես նաև ընտանիքում հաշմանդամություն ունեցող, աշխատաշուկայում անմրցունակ անձինք և նրանց ընտանիքի 16-63 տարեկան գործունակություն ունեցող անդամները, ովքեր, որպես աշխատանք փնտրող, հաշվառվել են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի զբաղվածության պետական գործակալության տարածքային կենտրոններում և հանդիսանում են գյուղատնտեսական նշանակության վարելահողի սեփականատեր, վարձակալ կամ անհատույց օգտագործող:

Հավելենք, որ ծրագրի առավելագույն փողոցությունը երեք ամիս է, և այն ֆինանսավորվում է ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին: Իսկ Շիրակի մարզում ծրագրի կատարման պատասխանատուներն են մարզի բոլոր տարածաշրջանների Զբաղվածության պետական գործակալության տարածքային կենտրոնները, ովքեր՝ որպես գյուղատնտեսական աշխատանքների գծով խորհրդատուներ, համագործակցում են Շիրակի ԳԱՄԿ-ի մասնագետների հետ:

ԳԱՄԿ-ի մասնագետները մասնակցում են հողօգտագործողների գյուղատնտեսական աշխատանքների ժամանակացույցի կազմմանը, ինչպես նաև արդեն հաստատված ժամանակացույցով, յուրաքանչյուր ամսվա կտրվածքով, կատարված աշխատանքների գնահատմանն ու համապատասխան եզրակացությունների փորձմանը, որոնց հիման վրա էլ զբաղվածության պատասխանատուն գնահատում է ծրագրի կատարողականը: Համատեղ իրականացվող աջակցության ծրագրից օգտվում են մարզի 300-ից ավելի շահառուները:

Շիրակի ԳԱՄԿ

ԿՐԹՎԿԱՆ

Հաջողությունը բարեհաճ է պատրաստվածների հանդեպ

Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոնի իմ սիրելի դասախոսներից մեկը սիրում էր ասել. «Հաջողությունը բարեհաճ է պատրաստվածների հանդեպ»: Իմ բոլոր դասընկերները կհամաձայնեն ինձ հետ, որ Ագրոբիզնեսի մագիստրոսական ծրագրի ուժեղ կողմերից մեկը՝ հենց ուսանողներին լավագույնս պատրաստելն է: Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոնի մասին առաջին անգամ լսել եմ իմ գործընկերոջից: Վարելով տարբեր, այդ թվում՝ մանրածախ առևտրի ոլորտում միջին օղակի ղեկավարի պաշտոններ և գործի բերումով շփվելով տարատեսակ բիզնեսների հետ՝ ես հասկացա, որ բիզնեսի տարբեր ոլորտների վերաբերյալ ինձ լուրջ մասնագիտական գիտելիքներ են անհրաժեշտ: Շատ արագ հասկացա, որ ԱՌԿ-ի Ագրոբիզնեսի մագիստրոսի աստիճանն է այն միակ ուղին, որ հանգեցնելու է իմ նպատակների ու ձգտումների իրականացմանը:

բացարձակ պատվախնդրություն և միայն լավագույնը լինելու անզուսպ ցանկություն ունեցող ուսանողների: Ըներգիայի, գիտելիքների և ձեռնարկչական

կայելու հարցում, և այդ վստահությունը կառուցվում է ԱՌԿ-ի մագիստրատուրայում ստացածս հմտությունների և փորձի ամուր հիմքի վրա:



ԱՌԿ-ի մագիստրատուրայում ստացած գիտելիքներս ինձ մեծապես օգնել են ևս երկու դեպքում: Առաջինը՝ այն ժամանակ, երբ վեց ամսվա ուսանող էի: Որպես մանրածախ առևտրի ոլորտի միջին օղակի ղեկավար, որոշեցի պատրաստել վաճառքի կանխատեսումների վերաբերյալ հաշվեկշիռային՝ օգտագործելով ԱՌԿ-ում սովորած էկոնոմետրիկա առարկայի գործիքները: Մեկ շաբաթ անց ինձ ավագ ղեկավարի պաշտոն առաջարկեցին: Իսկ մագիստրատուրայի առաջին կուրսն ավարտելուց հետո, երբ հասցրել էի փոխել աշխատատեղս և նոր տեղում իմ գործընկերներին արդեն չէի կարող զարմացնել էկոնոմետրիկ գործիքների իմացությամբ, այս անգամ էլ ստոխաստիկ մոդելները «Եկան փրկության», և ես դարձյալ տարբերվեցի մյուսներից: Այնպես որ, ես այժմ հայտնի եմ որպես «արտասովոր» բաներ իմացող «օտարական»:

ոգու այն պաշարը, որը հրամցվում է ուսումնառության ամբողջ ընթացքում, ինձ ստիպեց փոխել բացարձակության հովերին փուրք փոխ մտածելակերպս՝ և մեջս զարգացրեց իրական ուժեղ հմտություններ ունեցող իրական ձեռնարկչին: Ժամանակին զուգընթաց, գնալով ավելի վստահ եմ դառնում գործարար աշխարհի առաջադրած մարտահրավերներին դիմա-

ԱՌԿ-ի մագիստրատուրայում սովորելը դժվար էր, բայց այսօր ես ուրախ եմ իմ բոլոր անջուն գիշերների, ուժերի լարման և, ինչպես ձեռնարկատիրության իմ դասախոսը կասեր՝ վաղորդք տառապելու համար: Արամայիս Դալլաքյան
ԱՌԿ-ի Ագրոբիզնեսի մագիստրոսական ծրագրի 2014 թ.-ի շրջանավարտ

ՀԵՏԱՔՈՒՔԻՆԷ...



ՄԵԿ ԳԼՎԱԹ ԹԵՅ

դացման հետևանքով ազդեն արյան շրջանառության, մարսողական, շնչառական ֆունկցիաների և նյարդային համակարգի վրա: Այս հակաօքսիդանտներն արդյունավետ կերպով չեզոքացնում են ազատ ռադիկալներին: Կանաչ թեյը կամ սպիտակ թեյը, որին ավելացնում են լիմոն կամ լիմոնի հյութ, շատ ավելի օգտակար է համարվում առողջության համար: Թեյը նաև թույլ չի տալիս, որպեսզի տարիքի հետ ի հայտ գա մակուլոդիստոֆիան, առաջանան տեսողական խնդիրներ, մկանների թուլացում և այլն:

սիդանտներն ամրացնում են իմունային համակարգը, մեղմում տենդը և կանխում վարակները: Տանինը տոնիկ հատկություն ունի, և եթե թեյը խմում են առանց շաքարի, այն չեզոքացնում է բերանի խոռոչում գտնվող թթուները, ոչնչացնում մանրէները: Թեյը թույլ չի տալիս նաև, որ լնդերը թուլանան, հեռանան ատամներից:

սթրեսը, այն նաև ժամանակավոր հանգստացնում է արկված նյարդերը և լավ զգացողություն հաղորդում օրգանիզմին:

ՉՈՒՇԱՑՈՒՄ

Թեյը կարող է օրգանիզմում կախվածություն ստեղծել: Այն մարդիկ, ովքեր սովորության համաձայն՝ օրական խմում են 4-5 բաժակ թեյ, վերջինի բացակայության դեպքում, զգում են թուլություն, էներգիայի պակաս: Թեյի մեջ առկա տանինը և կոֆեինը կարող են վնասել լյարդը և թոքերը: Թեյի այս վնասակար ազդեցությունը կարելի է նվազեցնել՝ դրան ավելացնելով կիտրոն, կիտրոնի հյութ կամ կաթ: Թեյը նաև սպանում է ախորժակը: Քնելուց առաջ չպետք է թեյ խմել, քանի որ այն կառաջացնի անքնություն և գլխացավ:

Ձմռան այս օրերին խմեք մեկ գավաթ թեյ. այն հաճելի զգացողություններ կպարգևի ձեզ:

Թեյն աշխարհի ամենահայտնի և ամենագործածվող ըմպելիքներից մեկն է, որն ունի նաև առողջարար հատկություններ: Հայտնի է, որ չինացիներն են հայտնագործել թեյի բուժիչ հատկությունները և օգտագործել այն կենցաղում: Նրանք թեյը համարում էին տոնուսը բարձրացնող խմիչք, որը դառնալից էր ծերանալու պրոցեսները, վերականգնում էրիտասարդությունն ու կենսունակությունը, երկարեցնում կյանքը: Այդ պատճառով էլ միայն ազնվականները կարող էին թեյ խմել, և նրանք երկար ժամանակ գաղտնի էին պահում թեյի մոգական հատկանիշները:

որ սև թեյն իջեցնում է խոլեստերինը: Վատ խոլեստերինի բարձր մակարդակի հետևանքով առաջանում է սրտի ինֆարկտ: Ապացուցված է, որ այն մարդիկ, ովքեր օրական խմում են 3-4 բաժակ սև թեյ, ավելի քիչ են հակված ինֆարկտի, քան նրանք, ովքեր թեյ չեն խմում:

Բազմաթիվ գիտական հետազոտություններով, պարզվել է, որ թեյը հարուստ է այնպիսի պոլիֆենոլներով, ինչպիսիք են՝ կատեխինները (catechins), որոնք առկա են թեյի ֆլավոնոիդների մեջ, և որոնցով էլ պայմանավորված է թեյի հոտը: Թեյը հարուստ է հակաօքսիդանտներով, որոնք թույլ չեն տալիս, որպեսզի զարգանա լյարդի, աղիների, հաստ աղիքի, երիկամի, կրծքի և թոքերի քաղցկեղը: Ալկալոիդները՝ տանինը և կոֆեինը կասեցնում են քաղցկեղածին բջիջների առաջացումը:

Թեյի գիտական անվանումը Camellia Sinensis է: Թեյը գնահատում են՝ ըստ համի և հոտի: Թեյի համուհոտը պայմանավորված են նրանում առկա տանինով (tannin): Շուկայում թեյի գինը պայմանավորված է տերևների կտրվածքով, մնացորդներով:

Թեյի մեջ պարունակվող թեաֆլավինները ոչնչացնում են մարմնի ոչ նորմալ բջիջներին, նախքան դրանք կվնասեն մյուսներին կամ կվերածվեն քաղցկեղի բջիջների: Ինչպես ապացուցել են չինացիները՝ թեյի մեջ առկա հակաօքսիդանտները դառնալից են օրգանիզմի ծերացման պրոցեսները: Դրանք թույլ չեն տալիս, որ ազատ ռադիկալներն օքսի-

դեյն մեծ հակադեպրեսանտ է և էներգիայի աղբյուր: Ալկալոիդները՝ տանինը և կոֆեինը, արդյունավետ, տոնուսն արագ բարձրացնող բնական միջոցներ են: Թեյը վերացնում է հոգնածությունը, թարմացնում է ուղեղը և հավասարակշռում տրամադրությունը: Եթե ցանկանում եք վանել բուլիմիա, ապա մի հապաղեք և խմեք մեկ բաժակ թեյ: Թեյի մեջ առկա L-Theanine ամինաթթուն, որն ավելացնում է ուղեղի զգունությունը:

Թեյի մեջ առկա տանինը և կոֆեինը նաև հակավարակային միջոցներ են, որոնք ունեն հիանալի հակամանրէային, հակավիրուսային և հակաբակտերիալ հատկություններ: Դա նրանից է, որ բոլոր ալկալոիդները՝ տանինը, կոֆեինը, նիկոտինը և ստրիկտինը, թույլներ են, որոնք սպանում են կենդանի բջիջները: Եթե դրանք օգտագործվեն մեծ չափաբաժնով, կարող են ճակատագրական համարվել մարդու կյանքի համար: Սակայն, եթե օգտագործենք փոքր չափաբաժնով, ապա կոչնչանան միայն մանրէները: Թեյի մեջ պարունակվող հակաօք-

ՉԱՄԻՉ



Չամիչի օգտակար և բուժիչ հատկությունները հայտնի են դեռևս վաղ ժամանակներից: Չամիչն ամրապնդում է նյարդային համակարգը, նաև հանգստացնող միջոց է: Բժիշկները խորհուրդ են տալիս չամիչ ուտել՝ անեմիայի և ընդհանուր թուլության, տենդի և աղեստամոքսային համակարգի խանգարումների, ինչպես նաև՝ սրտի և երիկամների հիվանդությունների ժամանակ:

Չամիչի բուժիչ հատկությունները պայմանավորված են չոր մրգերում առկա օգտակար հանքային աղերով, օրգանական թթուներով և վիտամիններով: Շաքարների՝ գլյուկոզայի և ֆրուկտոզայի քանակը չամիչում 8 անգամ ավելի բարձր է, քան՝ խաղողի մեջ: Նրանում առկա են մեծ քանակությամբ պրոտեիններ, թիամին և նիացին, ճարպեր, ինչպես նաև՝ բազմաթիվ հանքային աղեր:

Մուգ չամիչը, սև խաղողը և դրանից պատրաստված գինին ավելի օգտակար են, քան դրանց բաց տեսակները: Անգամ կարիեսը և լնդերի հիվանդությունները կարելի է բուժել չամիչի օգնությամբ: Դրանում առկա հակաօքսիդանտները ճնշում են ատամնաբուժական բազմաթիվ հիվանդությունների պատճառ հանդիսացող մանրէների աճը:

Օգտակար հատկությունների շնորհիվ, չամիչն ամրապնդում է թոքերը, սիրտը, նյարդային համակարգը, այն անգամ ճնշում է ցատումը և հանդարտեցնում նյարդերը: Չամիչի հատկություններն էապես գերազանցում են խաղողի հատկություններին, ինչի մասին գիտենի նույնիսկ հազարամյակներ առաջ: Դեռևս վաղուց չամիչը օգտագործվում էր բժշկության մեջ, դրա եփուկի և սոխի հյութի համատեղ կիրառումը օգտակար է՝ հագի, մրսածության, կոկորդի հիվանդությունների ժամանակ:

Չամիչն օգտակար է նրանց, ովքեր ցանկանում են ամրապնդել իրենց իմունային համակարգը, լարված են կամ տառապում են անքնությամբ:

Advertisement for AgriNews magazine. It lists subscription rates for different durations (1, 6, 12 months) and includes contact information for the publisher, ASRC.

Footer section containing the AgriNews logo, contact details for the publisher (ASRC), and information about the magazine's circulation and distribution.